# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 9 - 10 (16608) ՇԱԲԱԹ, 3 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «2017-Ն ԱՎԱՐՏԵՑԻՆՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼԱՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ»




*Հունվարի 31-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ երկրի բիզնես-ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:*

Ինչպես նշեց վարչապետը, վիճակագրության ծառայության ազգային տվյալներով, 2017 թվականին երկրի համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) ավելացել է 4,8 տոկոսով:

- Նախորդ տարվա դեկտեմբերի սկզբին Վրաստանի կառավարությունը ՀՆԱ-ի աճն ավելացրել էր 4-ից մինչեւ 4,5 տոկոսը, թեեւ Արժույթի միջազգային հիմնադրամը եւ Համաշխարհային բանկը 2017-ի համար կանխագծում էին 4, իսկ վերակառուցման եւ զարգացման

Հանրագումարելով նախորդ տարվա տնտեսական ցուցանիշները՝ վարչապետը գոհունակություն հայտնեց՝ նշելով, որ, ընդհանուր առմամբ, երկիրը տարին եզրափակել է մակրոտնտեսական խոստումնալի պարամետրերով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ-ԼԻՏՎԱ. ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

*Հունվարի 29-30-ին պաշտոնական այցով Վրաստանում էր գտնվում Լիտվայի վարչապետ Սաուլյուս Սկվերնելիսը:*



Այցի շրջանակներում, Լիտվայի կառավարության ղեկավարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի հետ: Լիտվայի վարչապետը եղավ նաեւ բռնազավթված գոտում հարակից գտնվող Օձիսի գյուղում, հանդիպում ունեցավ Փրեզետի գյուղում բռնագաղթվածների հետ:

Վրաստանի կառավարության նստավայրում կայացած Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Սաուլյուս Սկվերնելիսի հետ հանդիպմանը, կողմերը քննարկեցին Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հեռանկարներ, տարածաշրջանային անվտանգության հարցեր, Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակը: Հանդիպմանը Լիտվայի վարչապետը կրկին ընդգծեց երկրի պատրաստակամությունը, աջակցություն ցուցաբերել Վրաստանին՝ նրա եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման գործընթացում:

## ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ



*Փետրվարի 1-ին Բրյուսելում անցկացվեց Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի հերթական նիստը, որին մասնակցեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն:*

Համատեղ նիստի շրջանակներում, Վրաստանի ԱԳ նախարարը հանդիպում ունեցավ Հյուսիսատլանտյան ալյանսի գլխավոր քարտուղար Յեն Ստոլտենբերգի հետ:

Կողմերը քննարկեցին եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման գործընթացը: Հանդիպմանը բարձր գնահատա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՑԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վրացական անձնագիրն իր դիրքը բարելավեց միջազգային վարկանիշում անցյալ տարվա Շենգենյան գոտու երկրների հետ առանց մուտքի արտոնագրի ռեժիմի ակտիվացումից հետո:*




Անձնագրերի վարկանիշը հրապարակում է Henley & Partners խորհրդատվական ընկերությունը: Այս ցուցակում վրացական անձնագիրը վերեւ է բարձրացել 15 կետով:

Համաձայն վարկանիշի՝ Վրաստանը 199 երկրների շարքում զբաղեցնում է 53-րդ տեղը: Նախորդ վարկանիշում Վրաստանը զբաղեցնում էր 68-րդ տեղը:

Վարկանիշում նշվում է, որ Վրաստանի քաղաքացիները կարող են առանց մուտքի արտոնագրի կամ պարզեցված կարգով ճանապարհորդել դեպի աշխարհի 99 երկիր:

Անձնագրերի վարկանիշում առաջատարը Գերմանիան է, իսկ երկրորդ տեղում՝ Սինգապուրը:

Տարածաշրջանի երկրների շարքում Ուկրաինան 44-րդ տեղում է, Ռուսաստանը՝ 48-րդ, Թուրքիան՝ 50-րդ, Ադրբեջանը՝ 72-րդ, իսկ Հայաստանը՝ 76-րդ:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՕՐԸ



*Հունվարի 28-ը Հայկական բանակի կազմավորման օրն է, այն 26 տարեկան է: 1992թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշում՝ դրանով իսկ իրավականորեն ազդարարելով Հայոց Ազգային բանակի ստեղծումը:*

Հայոց բանակի կազմավորման 26-րդ տարեդարձի կապակցությամբ Հայաստանի եւ Արցախի բարձրագույն ղեկավարություններն այցելեցին Եռաբլուր հարգանքի տուրք մատուցելու իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին: «Եռաբլուր» պանթեոն այցելեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը, պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Նրանք ծաղիկներ դրեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի, զորավար Անդրանիկի շիրիմներին եւ Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ու զինծառայողների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Հայաստանի Զինված ուժերի կազմավորման 26-ամյակի առթիվ, Վրաստանում Հայաստանի դեսպանությունը հունվարի 26-ին Թբիլիսիում կազմակերպեց պաշտոնական ընդունելություն:*



Ընդունելությանը ելույթ ունեցան Վրաստանում Հայաստանի ռազմական կցորդ, գնդապետ Սամվել Ռամազյանը, Վրաստանի պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Ընդունելությանը ներկա էին Վրաստանի պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Լելա Չիքովանին, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմեր Չաչիբաիան, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ, Վրաստանի ԱԳՆ պաշտոնյաներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական եւ ռազմա-դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, հոգեւոր դասի եւ վիրահայ համայնքային կառույցների մի շարք ներկայացուցիչներ:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅԱԶԳԻ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻՆ



Հունվարի 28-ին, Հայաստանի Զինված ուժերի կազմավորման 26-ամյակի կապակցությամբ, Վրաստանում Հայաստանի դեսպանության անձնակազմը՝ դեսպան Ռուբեն Սադոյանի գլխավորությամբ, Վիրահայոց թեմի հոգեւոր դասի եւ թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ հարգանքի տուրք մատուցեց Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու բակում ամփոփված փառապանծ հայազգի զորավարներ գեներալներ Միխայիլ Լորիս-Մելիքովի, Իվան Լազարեւի, Բորիս Շելկովնիկովի, Արզաս Տեր-Ղուկասովի հիշատակին, տեղի ունեցավ զինվորական պատիվներով ծաղկեպսակի զետեղման արարողություն, կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Արարողությանը նախորդել էր Սուրբ Գեւորգ եկեղեցում տեղի ունեցած կիրակնօրյա պատարագը, որտեղ ներկաները մոմեր վառեցին եւ աղոթք բարձրացրին Հայոց բանակի եւ հայ զինվորների համար:

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «2017-Ն ԱՎԱՐՏԵՑԻՆՔ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼԱՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եվրոպական բանկը՝ 4,5, Ասիական բանկը ՀՆԱ-ի 4,2 տոկոսի աճ,- նշեց վարչապետը:

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, բյուջեի ազատության ինդեքսով երկիրը գտնվում է առաջին հնգյակում:

Հանդիպմանը Վրաստանի վարչապետը բիզնես-ասոցիացիայի անդամներին ներկայացրեց նոր բիզինես-օմբուդսմենին: Վարչապետի բնութագրմամբ, բիզնես-օմբուդսմեն նշանակված Իրակլի Լեկվինաձեն բավականին փորձառու է բիզնես-սուբյեկտների հարաբերությունների հարցում, եւ նա կկարողանա գործարարների խոսքը հասցնել կառավարությանը:

Վարչապետի եւ բիզնես-ասոցիացիայի անդամների հանդիպմանը, ներկա էին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Զուրաբ Ալավիձեն, բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին, պաշտոնական այլ անձինք:

# ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



կան տրվեց ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ Վրաստանի կողմից իրականացված միջոցառումներին, մասնավորապես, 2017 թվականի ազգային ծրագրի իրականացման, ինչպես նաեւ պաշտպանության ոլորտում ժողովրդավարական բարեփոխումների անցկացման ուղղությամբ:

Միխեիլ Ջանելիձեն հույս հայտնեց, որ այդ գնահատականը համապատասխան արձագանքման կարժանանա ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովում, եւ վստահեցրեց, որ Թբիլիսիի եւ Բրյուսելի միջեւ ռազմավարական համագործակցության զարգացման դինամիկան առաջիկայում էլ կպահպանվի:

Իր հերթին, Յեն Ստոլտենբերգը կրկին հավաստիացրեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության պահպանման հարցում ալյանսի դիրքորոշման անխախտությունը:

Հանդիպմանը ընդգծվեց նաեւ Վրաստանի դրական դերակատարությունը եւ նրա ավանդը տարածաշրջանում ու ընդհանուր եվրանտլանտյան անվտանգության ապահովման գործում:

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԻՄՆՎՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՈՒՉԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



*Խորհրդարանի կողմից օրինանախագծի հաստատման դեպքում, Վրաստանում կստեղծվի «Անկախ հետաքննչական մեխանիզմ, որը կկոչվի պետական տեսուչի ծառայություն:*

Այդ մասին հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին: Ինչպես նշեց նա, օրինանախագծում պետական տեսուչի ծառայության աշխատանքը իրականացվելու է երեք ուղղություններով՝ իրավապահների կողմից անվայել վարքի համար, այդ թվում՝ կտտանքների, ծեծի եւ այլն, որոնք կարող են հանգեցնել քաղաքացու մահվան, անհատական տվյալների պաշտպանություն եւ հետաքննության գաղտնիության հետ կապված գործունեություն:

- Մենք ոչ կառավարական հատվածին, ինչպես նաեւ փորձագետներին ներկայացրել ենք օրինանախագիծ, որը համաձայնեցված է ուժային կառույցների հետ: Դրանում հաշվի են առնվել Վրաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին: Նրա խոսքով, հետաքննչական նոր մեխանիզմը գլխավորելու է Թամար Կալդանին, որը այդ պաշտոնում իր լիազորությունները կիրականացնի մեկուկես տարվա ընթացքում, քանի որ նոր օրինանախագիծը, ամենայն հավանականությամբ, ուժի մեջ կմտնի 2019 թվականի հունվարի 1-ից հետո: Արդարադատության նախարարի խոսքով, պետական տեսուչը կընտրվի խորհրդարանի կողմից:

# ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՆՈՐ ՄԱՔՍԱԿԵՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

*Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը դատապարտում է Վրաստանի բռնազավթված տարածքներում նոր մաքսակետերի բացումը, մասնավորապես, Ախալգորիում եւ Սուխումիում ռուսական մաքսակետի եւ Ռուսաստանի մաքսային դաշնային ծառայության հատուկ մաքսակետի բացումը:*

ԱԳ նախարարության գնահատմամբ, այդ քայլը ուղղված է բռնազավթված Աբխազիան եւ Ցխինվալիի տարածաշրջանը Ռուսաստանի միասնական մաքսային տարածքում ընդգրկմանը, եւ հերթական ապօրինի քայլ է վերոնշյալ երկրամասերի փաստացի բռնազավթման ուղղությամբ:

Գերատեսչության տեղեկատվությամբ, Ախալգորիում նոր մաքսակետի բացման Ցխինվալիի երկրամաս արգելվել է Վրաստանից սամթերքների եւ կաթնամթերքների ներկրումը, ինչն է՛լ ավելի է ծանրացնում տեղի բնակչության հումանիտար իրավիճակը, սահմանափակում է նրանց ազատ տեղափոխությունը եւ կոպիտ խախտում նրանց հիմնարար իրավունքները:

Վրաստանի ԱԳ նախարարությունը դիմում է միջազգային հանրությանը, համապատասխան ձեւով արձագանքել Ռուսաստանի ագրեսիվ քաղաքականությանը եւ ձեռնարկել գործուն միջոցներ անկախ պետության տարածքների փաստացի բռնազավթման դեմ:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ

*Վրաստանի Ազգային բանկը, նախօրոք մշակված ծրագրի համաձայն, հանդիպումներ է անցկացնում երկրի տարածաշրջաններում: Այս անգամ Ազգային բանկի նախագահ Կոբա Գվենետաձեն հանդիպում ունեցավ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի գործարարների ներկայացուցիչների հետ:*

Կոբա Գվենետաձեն տեղի գործարարներին ծանոթացրեց դրամական քաղաքականության կոմիտեի որոշմանը եւ խոսեց վերջին ժամանակահատվածի մակրոտնտեսական միտումների մասին:

Հանդիպմանը քննարկվեցին արժեզրկման եւ դրա կանխագծման, տնտեսական աճի, դոլարիզացման գործընթացի, սպառողների իրավունքների պաշտպանության եւ այլ հարցեր:

Նշվեց, որ նման հանդիպումներն արտակարգ նշանակալից են, որպեսզի գործարարները առավել մանրամասն տեղեկատվություն ստանան էկոնոմիկայում իրականացված տեղաշարժերի եւ հնարավոր արդյունքների, ինչպես նաեւ Ազգային բանկի կողմից իրականացվող քաղաքականության ու երկրի էկոնոմիկայի վրա այդ քաղաքականության ազդեցության մասին:

# ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

*Վրաստանում Հայ Առաքելական եկեղեցին եւս կստանա 600 000 լարի փոխհատուցում խորհրդային տարիներին ստացած վնասի համար:*

Վրաստանի կառավարությունը N117 (27.01.2014) որոշման 4-րդ բաժնի 2-րդ կետի համաձայն, կրոնական հարցերով Պետական գործակալությանը հանձնարարվել է բաժանել գումարները, որպես խորհրդային ժամանակահատվածում ստացած վնասի փոխհատուցում:

Կրոնական համայնքների միջեւ գումարների բաժանման որոշումը կայացվել է խորհրդակցությունների արդյունքում եւ հաշվի առնելով փաստացի իրավիճակի ուսումնասիրության արդյունքները (ծխականների թիվը, հոգեւորականների քանակը, կրոնական շինությունների եւ կառույցների քանակը):

Կրոնական հարցերով պետական գործակալությունը որոշում է կայացրել համաձայն «2018 թվականի Վրաստանի պետական բյուջեի մասին» օրենքի, հատկացված 4 500 000 լարիից այս փուլում կրոնական կազմակերպություններին, որպես հատուցում, բաժանել միայն 3 500 000 լարի: Վրացական ուղղափառ... 

Վրացական իսլամական համայնքը փոխհատուցում կստանա 2 200 000, Վրաստանի Հայ Առաքելական քրիստոնեական համայնքը՝ 600 000, Վրաստանի հռոմեական կաթոլիկ համայնքը՝ 400 000, Վրաստանի հրեական համայնքը՝ 300 000 լարի:

Մնացած գումարը 1 000 000 լարի չափով, կբաժանվի ավելի ուշ:



### ՌՈՒՍԱՍՏԱՆ
## ՍՈՉԻՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԿՈՆԳՐԵՍ

*Սոչիում հունվարի 30-ի ուշ երեկոյան Սիրիական ազգային երկխոսության՝ մեկօրյա կոնգրեսի մասնակիցները համաձայնության հասան սկսելու երկրի սահմանադրության վերանայման աշխատանքը:*

*Բացի դրանից, կոնգրեսի արդյունքներով ընդունված համատեղ հայտարարության մեջ դրա մասնակիցները հավաստել են հավատարմությունը Սիրիայի տարածքային ամբողջականությանը, ահաբեկչության եւ կրոնական մոլեռանդության դեմ պայքարին: Մասնակիցները նաեւ հանդես են եկել միասնական բանակի եւ ազատ ընտրությունների անցկացման օգտին, որոնք պետք է որոշեն երկրի ապագան: Համաձայնության են եկել կազմելու սահմանադրական հանձնաժողով, թեկնածուների ցուցակը հաստատված է 150 մարդու կազմով (100 մարդ կառավարությունից՝ ներքին չափավոր ընդդիմության հաշվառմամբ, եւ 50-ն արտաքին ընդդիմությունից):*

### ԱՄՆ
## ՌՈՒՍԱՍՏԱՆՆ ՈՒ ՉԻՆԱՍՏԱՆԸ՝ ՍՊԱՌՆԱԼԻՔ

*Չինաստանն ու Ռուսաստանը սպառնում են ԱՄՆ-ի շահերին, տնտեսությանը եւ արժեքներին: Այդ մասին հայտարարեց ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը՝ ելույթ ունենալով Կոնգրեսին հղած «Երկրի դրության մասին» իր առաջին ուղերձում:*

*- Ամբողջ աշխարհում բախվում ենք վտարակ-վարչակարգերի, ահաբեկչական խմբերի եւ Չինաստանի ու Ռուսաստանի նման հակառակորդների, որոնք սպառնում են մեր շահերին, մեր տնտեսությանը եւ մեր արժեքներին,- ասաց նա:*

*Այս առնչությամբ, նա Կոնգրեսին կոչ արեց «դադարեցնել պաշտպանական բյուջեի վտանգավոր կրճատումը եւ ամբողջությամբ ֆինանսավորել ԱՄՆ զինված ուժերը»:*

### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ
## ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՉԵՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

*Եվրամիությունը որոշում է ընդունել չպաշտպանել հակառուսական պատժամիջոցների խստացումը:*

*Այդ մասին հունվարի 30-ին հայտարարել է Բելգիայի վարչապետ Շարլ Միշելը՝ ամփոփելով ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի հետ կայացած հանդիպման արդյունքները եւ մեկնաբանելով ԱՄՆ-ի ֆինանսների նախարարության կողմից տարածված «կրեմլյան ցուցակը»:*

*- Կցանկանայի ընդգծել, որ ԵՄ-ն որոշում է ընդունել չպաշտպանել պատժամիջոցների խստացումը,- ասել է նա:*

### ԻՍՊԱՆԻԱ
## ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

*Կատալոնիայի խորհրդարանում հետաձգել են ինքնավարության կառավարության ղեկավարի պաշտոնի համար Բելգիա փախած Կառլես Պուչդեմոնի թեկնածության քննարկումը:*

*- Պուչդեմոնի թեկնածության քննարկմանը նվիրված նիստը չի չեղարկվում, այլ հետաձգվում է,- ասաց խորհրդարանի նախագահ Ռոժե Տորենը:*

*Հիշեցնենք, որ Պուչդեմոնը Բելգիա է փախել 2017 թվականի հոկտեմբերի վերջին: Իսպանիայի տարածքում գործում է քաղաքական գործչի ձերբակալման օրդերը, որին դատախազությունը մեղադրում է խռովության եւ վատնումների մեջ:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

# ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՓՈԽՎՈՒՄ Է

## 2013 ԹՎԱԿԱՆԻՑ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆԵՐՄԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ 3671 ՄԱՐԴ

*Ինչպես հայտարարեց նախագահին առընթեր գործող ներման հանձնաժողովի նախագահ Զվիադ Քորիձեն, համաներման կարգում իրականացնելու են մի շարք փոփոխություններ: Քորիձեի խոսքով, Վրաստանի նախագահը հանձնաժողովին հնարավորություն է տվել առանց պատժաժամկետի չափորոշիչների քննարկելու դատապարտյալների դիմումները, ովքեր կատարել են թմրահանցագործություն, բացառությամբ նրանց, ովքեր զբաղվում են թմրանյութերի իրացմամբ, ծեռքբերմամբ, ներկրմամբ եւ տարանցմամբ:*



Ներման հանձնաժողովի նախագահի խոսքով, անձինք կարող են անմիջականորեն դիմել նախագահին, դատական երեք ատյաններում գործի քննարկման ավարտից անմիջապես հետո, կամ երբ սպառվում է վերադաս ատյաններում բողոքարկման ժամկետը:

- Շահագրգռված քաղաքացիները տեղյակ են, թե ինչ է նշանակում ըստ էության գործի քննարկումը, եւ ինչպես են սահմանվում այն չափորոշիչները, որոնք սահմանված էին մինչ օրս: Այդ չափորոշիչները առաջիկայում էլ կգործեն եւ չեն քննարկվի այն տեսակի իրավախախտումները, որոնք կապված են թմրանյութերի օգտագործման հետ: Եթե դատապարտյալի պատժամիջոցը սահմանվել է մեկ հոդվածով, եւ այն չի գերազանցում հինգ տարին, այդ դեպքում պետք է անցնի պատժաժամկետի մեկ երրորդ հատվածը, որպեսզի հանձնաժողովը ձեռնամուխ լինի, ըստ էության, նրա գործի քննարկմանը: Սակայն, եթե մեղադրյալը դատապարտվել է երկու հոդվածով, եւ պատժաժամկետը գերազանցում է հինգ տարին, նա արգելավայրում պետք է անցկացնի պատժաժամկետի առնվազն կեսը, որպեսզի հանձնաժողովը սկսի քննարկել նրա գործը: Եթե որեւէ մեկը կատարած իրավախախտման համար կրում է պայմանական պատիժ կամ համաներման հիման վրա ազատվել է քրեական պատասխանատվությունից, եւ անձը չի ազատվել դատվածությունից, ապա մեղադրյալը պետք է արգելավայրում անցկացնի պատժաժամկետի առնվազն երկու երրորդը,- հայտարարեց Քորիձեն:

Զվիադ Քորիձեն անդրադարձավ նաեւ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու ընտրությունից հետո, 2013 թվականից նախագահական ներման արժանացածների հանրագումարմանը: Նրա խոսքով, 2013 թվականից նախագահական ներման է արժանացել 3671 դատապարտյալ: Այդ թվից 38 դատապարտյալի հարցով հանձնարարականով դիմել է հանձնաժողովը: Վերջիններից 2384-ը ազատվել է բանտից, իսկ 1054-ի պատժաժամկետը նվազեցվել է: Մնացած 233 անձանց նախագահը անմիջական ներում է շնորհել:

Ավելացնենք, որ Միխեիլ Սաակաշվիլի իր նախագահության օրոք ներում էր շնորհել 8950 մարդու:



### ԳԵՐԱԿԱՏԱՐՎԵԼ Է 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵՆ

*Հենվելով գերատեսչության նախնական տվյալների վրա՝ Վրաստանի ֆինանսների նախարար Մամուկա Բախտաձեն հայտարարեց, որ 2017 թվականի պետբյուջեն գերակատարվել է:*

*- Բյուջետային մուտքերը գերակատարվել են 120 միլիոն լարիով: Մոտ օրերս մենք կունենանք մանրամասն տեղեկատվություն, որը կներկայացնենք խորհրդարանին, իսկ այսօր կարող եմ ասել, որ պետբյուջեն գերակատարվել է: Լավ տվյալներ են նաեւ բյուջեի յուրացման, մյուս պարամետրերի ուղղությամբ,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:*

### ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԵԼ Է 5418 ՏՈՒԳԱՆՔ

*2017 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ը, անկոնտակտ պարեկության արդյունքում, Թբիլիսիում սահմանվել է 5418 տուգանք: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի ՆԳ նախարարությունը:*

*Ինչ վերաբերում է տարածաշրջաններին, ապա, գերատեսչության տեղեկատվությամբ, Աջարիայում լրացվել է 3041, իսկ Իմերեթիում՝ 3657 տուգանային կտրոն:*

*Հիշեցնենք, որ ճանապարհային երթեւեկության օրենսդրության մեջ կատարած փոփոխությունների համաձայն, անկոնտակտ պարեկությունը երկրի մասշտաբով երկրում իրականացվում է առանձին ճանապարհահատվածներում: Անկոնտակտ պարեկության գոտի մուտք գործելու մասին տեղեկատվությունը փակցված է ճանապարհի եզրին, ինչը վարորդներին զգուշացնում է, որ մուտք են գործել անկոնտակտ պարեկության գոտի:*

### ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱԹԵԹԸ

*Գերմանիայի համար նշանակալից լծակ է ՆԱՏՕ-Վրաստան առկա փաթեթը, որպեսզի Վրաստանին առավել մերձեցնի Հյուսիսատլանտյանալյանսին: Այդ նպատակով, ՆԱՏՕ-ում Գերմանիայի դեսպան Հանս-Դիտեր Լուկասը համաձայնություն է տվել Վրաստան-ՆԱՏՕ փաթեթում լրացուցիչ 500 հազար եվրո գումար ավելացնելու հարցին: Նշենք, որ դեռեւս 2016 թվականին Գերմանիան Վրաստանի պաշտպանունակության ինստիտուցիոնալ զարգացման դպրոցի համար հատկացրել էր 500 հազար եվրո: Վերոնշյալ ֆինանսական օգնությունը նախատեսված է ինչպես այդ դպրոցի զարգացման, այնպես էլ՝ Կրծանիսիում ՆԱՏՕ-ի ուսումնավարժական կենտրոնի աջակցության համար:*

# ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է 2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



*Վրաստանի ներքին գործերի նախարարությունը հրապարակել է 2017 թվականին գրանցված իրավախախտումների վիճակագրությունը: Նշենք, որ նախարարության կողմից հրապարակած վիճակագրությունը առաջինն է վերջին երկու տարիների ընթացքում:*

2017 թվականի վիճակագրության համաձայն, ընդհանուր առմամբ, գրանցվել է 37944 իրավախախտում, որից բացահայտվել է 53,2 տոկոսը: 2016 թվականի համեմատությամբ, գրանցված իրավախախտումների թիվը ավելացել է 5,4 տոկոսով: 2016-ին բացահայտման ցուցանիշը կազմում էր 57,4 տոկոս:

2017 թվականին երկրում գրանցված իրավախախտումների 64,5 տոկոսն ուղղված է եղել առողջության, ինչպես նաեւ սեփականության դեմ եւ վավերացվել են որպես թմրահանցագործություններ:

Նախորդ տարվա համեմատությամբ, իրավախախտումների աճի միտում է վավերացվել հետեւյալ հանցագործությունների ուղղությամբ, 2017 թվականին վավերացված իրավախախտումներից մարդու կյանքի դեմ իրականացվածները կազմել են 2,7 տոկոս (2016-ին՝ 11,9 տոկոս), առողջության դեմ՝ 14,1 տոկոս (14,8 տոկոս), մարդու իրավունքների եւ ազատության դեմ՝ 2,2 տոկոս (23,2 տոկոս), սեփականության դեմ՝ 37,9 տոկոս (8,1 տոկոս), բնապահպանության կարգի դեմ՝ 2,3 տոկոս (27,8 տոկոս), կառավարման կարգի դեմ՝ 6,4 տոկոս (17,5 տոկոս), ծառայական ակտերի կատարման դեմ՝ 2,5 տոկոս (20,5 տոկոս):

Ինչ վերաբերում է ընդհանրապես գրանցված հանցագործությունների թվաքանակի նվազեցման միտումին, ապա դրանք հիմնականում վավերացվել են հետեւյալ ուղղություններով՝ հասարակական ու անվտանգության եւ կարգի դեմ՝ 4,1 տոկոս (19,5 տոկոս), թմրաիրավախախտումներ՝ 12,5 տոկոս (8,3 տոկոս), տրանսպորտային իրավախախտումներ՝ 6,9 տոկոս (16,4 տոկոս):

# ՊԱՏԱՀԱՐ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԵՏՐՈՅԻ «ՎԱՐԿԵԹԻԼԻ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

*Հունվարի 30-ի առավոտյան, Թբիլիսիի մետրոյի «Վարկեթիլի» կայարանում կախովի առաստաղի քանդվելու հետեւանքով, տուժել է 14 մարդ, այդ թվում՝ անչափահասներ:*



Դեպքի վայր ժամանած Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն նշեց, որ տուժածների բուժման ծախսերը կստանձնի Թբիլիսիի քաղաքապետարանը:

Վերջին անգամ մետրոյի «Վարկեթելի» կայարանում նորոգում էր իրականացվել 2017 թվականին:

2018 թվականին ծրագրված է Թբիլիսիի մետրոպոլիտենի տասը կայարանների նորոգում:

Նշենք, որ Թբիլիսիի մետրոն օրական սպասարկում է շուրջ 290 հազար ուղեւորի: Թբիլիսիի հասարակական տրանսպորտի համակարգում մետրոն ուղեւորահոսքի ցուցանիշով զբաղեցնում է երրորդ տեղը՝ միկրոավտոբուսներից եւ ավտոբուսներից հետո:

Ներկայում Թբիլիսիի մետրոպոլիտենն ունի 23 կայարան: Մետրոյի ուղեգծերի ընդհանուր երկարությունը 57 կիլոմետր է:

# ՄՈՒՏՔԱՎԱՐՁ՝ ԱՎԵԼԻ ՔԱՆ 15 ՕՐՈՎ ՎՐԱՍՏԱՆ ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ

*Ընթացիկ տարվա մարտի 1-ից օտարերկրյա համարանիշներով մեքենաների վարորդները ստիպված կլինեն տրանսպորտային միջոցն ապահովագրել Վրաստան մուտքի ժամանակ, եթե մտադիր են այդ երկրում առնվազն 15 օր մնալ:*

«Օտար պետությունում գրանցված, Վրաստանում տեղաշարժող ավտոտրանսպորտային միջոցի տիրոջ քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրինագիծը խորհրդարանն արդեն հաստատել է, այն պետք է ստորագրի Վրաստանի նախագահը:

Ապահովագրություն ձեռք բերել հնարավոր կլինի հսկիչ-անցակետում: Ապահովագրական փաթեթի արժեքը կախված է տրանսպորտային միջոցի տեսակից եւ ապահովագրության ժամանակահատվածից:

Ապահովագրությունը պետք է ծածկի ճանապարհատրանսպորտային պատահարի ժամանակ տուժածներին հասցված ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ նյութական վնասը: Առողջությանը հասցված ծանր վնասը ծածկվում է ամբողջովին, իսկ պակաս ծանրը՝ 60% եւ 30%-ով: Մեկ դեպքի սահմանաչափը՝ ֆիզիկական վնասի դեպքում 30 000 լարի է (մոտ 11 800 դոլար), իսկ նյութական վնասի դեպքում՝ 25 000 լարի (ավելի քան 9 800 դոլար):

Ապահովագրությունը չի ծածկի ապահովագրվածի դիավորյալ գործողություններով, վտանգավոր նյութերի փոխադրման, ահաբեկչություններից, ռազմական գործողություններից եւ ռազմական մանեւրերից, մրցումների, զորավարժությունների կամ փորձարկումների ժամանակ առաջացած վնասը:

Վրացական սահմանին մինչեւ 3,5 տոննա քաշով մեքենաները, անկախ շարժիչի ծավալից, պետք է Վրաստանում 15 օր մնալու համար վճարեն 30, 30 օրվա համար՝ 50, մեկ տարվա համար՝ 295 լարի:



# ԱՌԱՆՁԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

***Ընթացիկ տարվա փետրվարի 1-ից ավելացվում է առաջատար եւ մենտոր ուսուցիչների աշխատավարձը:***



Մասնավորապես, առաջատար ուսուցիչները, լրիվ ծանրաբեռնվածության դեպքում, կստանան 700 լարի, իսկ մենտոր ուսուցիչները՝ 1000 լարի: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի կրթության ու գիտության նախարարությունը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի փոխտնօրեն Մանանա Ռատիանու տեղեկատվությամբ, Վրաստանում ներկա դրությամբ աշխատում է 257 առաջատար եւ 9 մենտոր ուսուցիչ: Նրա խոսքով, մինչեւ վերոնշյալ փոփոխությունները, առաջատար ուսուցիչների աշխատավարձը կազմում էր 500, իսկ մենտոր ուսուցիչներինը՝ 700 լարի:

Ինչ վերաբերում է ընդհանրապես ուսուցիչների աշխատավարձին, ապա 2017 թվականի հունվարի 1-ից նրանց միջին աշխատավարձն ավելացվել էր: Ներկայումս մենտոր ուսուցիչներն ստանում են 1100, առաջատար ուսուցիչները՝ 965, ավագ ուսուցիչները՝ 800, իսկ պրակտիկ ուսուցիչները՝ 600 լարի աշխատավարձ:

Հիշեցնենք, որ ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ պաշտոնական առաջընթացի սխեման երկրում գործում է երկրորդ տարին: Ըստ այդ սխեմայի, ուսուցիչները բաժանված են չորս կատեգորիաների՝ պրակտիկ, ավագ, առաջատար եւ մենտոր: Գործող սխեման ուսուցիչներին հնարավորություն է ընձեռում առաջադիմել սահմանված կատեգորիաներում եւ ավելացնել աշխատավարձը:

# ՈՐՈՇ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՉԵՂԱՐԿՎԵՆ

***Լրագրողների հանդիպմանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին չբացառեց, որ դպրոցներում որոշ առարկաների ավարտական քննությունները հնարավոր է չեղարկվեն:***



Նրա խոսքով, նախարարությունն այդ ուղղությամբ աշխատում է, եւ, հնարավոր է՝ նորամուծությունը այս տարի կիրարկվի:

Պատասխանելով լրագրողների հարցին՝ ծրագրվո՞ւմ է, արդյոք, ավարտական քննությունները միավորել ընդունելության քննությունների հետ, նախարարը հայտարարեց.

- Միավորումը սխալ ձեւակերպում է, թեպետ մենք այդ երկու քննությունների շուրջ աշխատում ենք, եւ երկուսում էլ հնարավոր են փոփոխություններ, առանձնապես՝ դպրոցի ավարտական քննություններում: Թեպետ միավորումը չի կատարվի, դրանք տարբեր բաներ են: Մենք աշխատում ենք տարբեր մոդելների մշակման ուղղությամբ, նպատակը մեկն է՝ մեր քննական համակարգը դարձնել առավել արդյունավետ: Կիրականացվի քննությունների օպտիմալացում, եւ քննությունը, իրոք, կդառնա գիտելիքի չափանիշ:

*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*



# ԱՐԹՈՒՐ ՏԵՐ-ԲԱՂԴԱՍԱՐՈՎ. «ՄԱՅՐԵՆԻԻՆ ՀԱՎԱՍԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է ՏԻՐԱՊԵՏԵԼ ԵՐԿՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻՆ»

***Յոթ քննությունն արդեն ետեւում է, ու բոլորը՝ գերազանց արդյունքով: Արթուր Տեր-Բաղդասարովը Վրաստանի համալսարանի հոգեբանության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող է: Թվում է՝ շարքային ուսանողի հերթական մի պատմություն... հերթական քննություն ու հերթական հաջողություն... Միգուցե, այդպես մտածեի ես էլ՝ երբեմնի ուսանողս, եթե չտեսնեի, որ հերթական մի օր ու ժամ, հերթական ուսանողների հետ հերթական դասախոսությանը նստած Արթուրը, ցավոք, թե բարեբախտաբար, հերթական չի կարող լինել, քանի որ արդեն հաջողացնում է իրագործել հերթականից դուրսը: Արթուրը ծնվել է ողնաշարի ճողվածքով, երկու ամսական է եղել, երբ վիրահատել են: Բժշկի անզգույշ սխալը ճակատագրական հետեւանք է ունեցել, վնասվել է ոտքերի ներվը, եւ նա առայսօր չի քայլում: Այդուհանդերձ, տխուր պատմությունն այստեղ չի ավարտվում... ընդհակառակը՝ ամեն ինչ սկսվում է հենց այս «կանգառից»:***

***Թբիլիսիի Էլիա թաղամասում բնակվող 20-ամյա Արթուրի հայրը կոշկակար է, մայրը՝ դերձակ: Երեք քույր ու մեկ եղբայր են:***

*- Ընտանիքը կյանքի ամենակարեւոր հենասյունն է,-* **ասում է նա:-** *Տարիքի հետ ընտանիք ասածն առավել կարեւորվում ու իմաստավորվում է: Իմ ընտանիքը նման է բոլոր մյուս ընտանիքներին, միաժամանակ, տարբերվում է մյուսներից, ինչպես եւ մնացած բոլորն իրարից: Իմ ընտանիքը միշտ լի է: Լի՝ բառիս բուն ու փոխաբերական իմաստներով, ջերմ՝ հարաբերություններով ու մարդկանցով:*

Ասվածը փաստարկելու համար, բավական է մեջբերել հիշողությունն այն օրվա, երբ Թբիլիսիի թիվ 86 հանրային դպրոցի շրջանավարտ Արթուրը որոշեց շարունակել ուսումը բարձրագույն հաստատությունում: Համաձայնեք, որ իսկապես դժվար էր սայլակով Էլիայից Սաակաձեի հրապարակ (Սաբուրթալո) տեղափոխվել, ուր եւ գտնվում է Արթուրի նախընտրած Վրաստանի համալսարանը: Այն էլ՝ սոցիալական ոչ այդքան բարվոք կարգավիճակ ունեցող ընտանիքում: Բայց արի ու տես, որ իրական երջանկության աղբյուրը նյութականը չէ, այլ հոգատար ու անհնարն իրական դարձնող ընտանիքի մոդելը, որի շնորհիվ, Արթուրը, երեւի, ամենապարտաճանաչն է այսօր համալսարանում եւ գրեթե չի բացակայում եւ ոչ մի դասախոսությունից:

*- Երբ տեսնում էի, թե ինչպես են քույրերս սովորում ու դրա շնորհիվ հաջողությունների հասնում, ինքս էլ՝ մի տեսակ թեւեր էի առնում,-* **ասում է Արթուրը**:- *Նրանք ինձ համար ապավեն դարձան: Այժմ կրթությունս շարունակում եմ բուհում: Ինձ աջակցում է ընտանիքս: Եթե չլիներ նրանց ըմբռնումն ու օգնությունը, թերեւս չէի հասնի հաջողությունների, չէի վստահի ուժերիս ու կարողություններիս:*

Արթուրն ընտրել է հոգեբանի մասնագիտությունը: Ասում է, որ միշտ հետաքրքրվել է մարդու հոգեբանությամբ ու, առհասարակ, մտածողությամբ:

*- Եթե առողջ է ներաշխարհդ, ապա առողջ ես եւ դու: Առողջ լինելու համար պետք չէ ստանդարտ մտածողություն ունենալ: Ընդհակառակը, ամեն մարդ մի աշխարհ է, մի տեսակ, մի հենասյուն ու շարժիչ ուժ: Կարեւորն ինքնադրսեւորումն է, եւ ես մեծ սիրով կցանկանայի օգնել մարդկանց այդ հարցում: Մարդու կայացման մեջ մեծ դեր ունի նաեւ բուհական կրթությունը, որն առավել ազատ ու հասուն է դարձնում նրան: Իսկ բուհի հանդեպ հետաքրքրությունը հիմնականում պայմանավորում է դպրոցը:*

Արթուրը երախտիքով է խոսում իր դպրոցի մասին: Նա սովորել է կրթական ոլորտի անցումային այն շրջանում, ուր գրեթե յուրաքանչյուր օր մի բան էր փոխվում ու հաստատվում: Բայց զարմանալիորեն այդ ընթացքն իր դրական ազդեցությունն է ունեցել: Մինչեւ չորրորդ դասարան Արթուրը սովորել է հայկական, մինչեւ իններորդը՝ ռուսական, իսկ մնացած երկու տարիները՝ վրացական դարձած նույն դպրոցում: Երեք լեզու սերտել: Այս երեքին զուգահեռ յուրացրել է չորրորդը՝ անգլերենը:

*- Վրացերենն ինձ համար երկրորդ մայրենիս է: Երբ ապրում ես հայրենիքից դուրս, մայրենիին հավասար կարեւոր է տիրապետել տվյալ երկրի պետական լեզվին, նախ՝ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու եւ ապա պատշաճ աշխատանք ունենալու համար: Միաժամանակ, վրացերենն ինձ համար հարազատ է, քանի որ, մայրենիիս հետ հավասար, ծնվածս օրից լսել եմ վրացերենը եւս: Ապրում եմ այն գիտակցումով ու զգացողությամբ, որ հայ եմ, սակայն այս երկրում եմ ծնվել ու ձեւավորվում՝ որպես անձ, ուստի Վրաստանը համարում եմ իմ հայրենիքը: Հայաստանից դուրս, ես ինձ առավել քան հայ եմ զգում: Վրաստանն ինձ տվել է այն ամենը, ինչ ունեմ:*

Ուսման հանդեպ սերը Արթուրի հաջողության գրավականն է: Ասվածիս հերթական ապացույցը. ստացվեց այնպես, որ Արթուրը բուհ ընդունվեց վճարովի համակարգով, բայց ընտանիքը վճարունակ չէր, եւ հենց առաջին կիսամյակում վճարի հետ կապված խնդիրներ առաջացան: Եվ սակայն, առաջադիմությունն ու համալսարանական ակտիվությունը նախադրյալ դարձան, որպեսզի բուհը ֆինանսավորի նրա ուսումը: Որոշ ժամանակ անց, համալսարանի ֆեյսբուքյան էջում Արթուրի մասին գրվեց հետեւյալը. **«Լուսանկարի առաջին շարքերում Արթուրն է: Նա հոգեբանության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող է: Առաջին իսկ օրվանից արժանացել է մեր հարգանքին ու սիրուն: Զարմանալիորեն կազմակերպված է եւ ինքնուրույն: Ընդունվելուն պես, ամեն ինչ ինքնուրույն է պարզել, ծանոթացել համալսարանի կարգուկանոնին, ինքն է ընտրել իր դասացուցակը եւ կապ հաստատել դասախոսների հետ: Այնքան նպատակասլաց է, որ ոչ մի դասախոսություն բաց չի թողնում: Սկզբում, սկայպի միջոցով էր մասնակցում դասախոսություններին: Եվ եթե նույնիսկ ոչ բոլոր դասաժամերին էր հաջողվում ապահովել տեսամիացումը, ապա միեւնույն է, ջանադրորեն պարապում էր, այս անգամ՝ ինքնուրույն: Պիտի տեսնեք, թե որքան լավ է փակել նախորդ կիսամյակը: Անկախ բոլոր խոչընդոտներից, անխափան հաճախում է համալսարան ու արդեն բազում ընկերներ է ձեռք բերել: Ինչպես ինքն է ասում, ամենահաճելին համալսարանի ընկերների շրջապատում լինելն է: Չափազանց աշխատասեր է, առաջին հերթին, ինքն է պարզում եւ ուսումնասիրում ամեն ինչ ու, եթե պատասխան չի գտնում, դրանից հետո է միայն դիմում համալսարանի օգնությանը: Արթուրի նպատակն է լինել հաջողված ուսանողներից եւ ոլորտի լավագույն մասնագետներից մեկը: Անչափ ուշադիր եւ դաստիարակված է: Վարչության բոլոր անդամների հանդեպ այնպիսի վերաբերմունք է ցուցաբերում, որ անհնար է հազարապատիկը փոխադարձելու ցանկություն չունենաս, որպեսզի ինչ-որ չափով նպաստես նրա մեծագույն նպատակի իրագործմանը: Արթուրը մեծ խթան եւ օրինակ է բոլորիս համար: Հավատում ենք, որ նա կհասնի իր բոլոր նպատակներին: Արթուր, երջանիկ ես, քանի որ բացառիկ կարողությունների տեր ես...»:**

Իսկապես, Արթուրի օրինակը մեկն է այն եզակիներից, որոնք հատկապես մեզ՝ հողի վրա ամուր կանգնածներիս, սթափ պետք է պահեն չտրտնջալու եւ անկանգառ քայլելու համար: Մենք երկար զրուցեցինք եւ հարցերից վերջինը՝ նորից կյանքն էր:

- Ի վերջո, ինչպիսի՞ն է կյանքը,- **հարցնում եմ նրան,-** ու ինչպե՞ս պետք է ապրել, հաղթահարել դժվարություններն ու մասնակիցը դառնալ պտույտի:

*- Ինչպիսի՞ն է կյանքը... Մեզանից յուրաքանչյուրն այս հարցի վերաբերյալ ունի իր տեսակետը,-* **պատասխանում է նա:-** *Ըստ իս, կյանքը մի գիրք է, որը մենք գրում ենք ըստ մեր ցանկության: Սակայն այդ գիրքը հնարավոր է կարդալ միայն՝ երբ ավարտենք: Կյանքը, խնդիր է, որն ապրելով ենք լուծում: Սակայն, հաճախ սխալ լուծումներ գտնում եւ հենց այդ պատճառով չենք ստանում ցանկալի արդյունք: Ինչպիսի՞ն է կյանքում ապրող մարդը: Ինձ թվում է, որ այս հարցը բազմաթիվ պատասխաններ ունի, որովհետեւ մենք՝ ամենքս, միմյանցից շատ ենք տարբերվում: Իսկ թե ինչպես պետք է ապրել՝ ամեն մարդ ինքնուրույն պետք է որոշի: Ինչ վերաբերում է դժվարություններին, ամեն մարդու կյանքում, վաղ թե ուշ որոշակի դժվարություններ ու խնդիրներ առաջանում են, որոնք հաղթահարելու համար համբերություն, կամքի ուժ եւ բարություն է հարկավոր: Գուցե կաղապարային թվա, բայց իմ նշանաբանը հետեւյալն է. մենք պետք է դադարենք ինչ-որ մեկի հետ մրցակցության մեջ ապրելուց: Միշտ էլ կգտնվի մեկը, ով մեզանից ավելի գեղեցիկ, ավելի խելացի, կամ ավելի հաջողակ կլինի: Կենտրոնացեք սեփական անձը զարգացնելու վրա... եւ կյանքում առավել քան օգտակար կլինեք:*

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*